ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

8 օգոստոսի 2011թ. **N --- - Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և 75-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Երևանի քաղաքապետին լիազորություն վերապահելու, Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու մասին» N995-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված.

   1) Եկամուտների գումարն ավելացնել 1,734,600.0 հազ. դրամով,

   2) ծախսերի գումարն ավելացնել 1,734,600.0 հազ. դրամով:

2. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN1-5 հավելվածների:

3. Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 339,022.1 հազար դրամ, որից

1) 269,022.1 հազար դրամ՝ Երևան քաղաքի հեղեղատար կոյուղու վերակառուցման աշխատանքների համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով,

2) 70,000.0 հազար դրամ՝ Երևան քաղաքի Կոմիտասի անվան այգու՝ պանթեոնի տարածքի բարեկարգման և վերանորոգման համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով։

4. Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 2011 թվականի ինն ամսում հատկացնել մինչև 700,000.0 հազ. դրամ, որից

1) 600,000.0 հազար դրամ՝ Ասիական զարգացման բանկի կողմից տրամադրվող վարկային միջոցներով իրականացվող «Քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ծրագրի» շրջանակներում Երևան քաղաքի վարչական սահմաններում գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում օտարվող սեփականության (հողերի) դիմաց փոխհատուցում տրամադրելու համար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով,

2) 100,000.0 հազար դրամ՝ «Երևան» հիմնադրամին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում նախատեսվում է իրականացնել հետևյալ փոփոխությունները.

- Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի «Երևանի քաղաքապետին լիազորություն վերապահելու, Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 995-Ն որոշման ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 1,734,600.0 հազար դրամ հատկացվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝ Երևանի քաղաքապետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին» հոդվածով տրամադրելու համար, որի շրջանակներում նախատեսված է ավելացնել Երևան քաղաքի բյուջեի եկամուտները,
- Բյուջեի «Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում» ծրագրով Զաքյան–Տերյան փողոցների կապ և Բյուզանդ փողոցից մինչև Խորենացի կենցաղային կոյուղու լուծմամբ աշխատանքների իրականացման համար նախատեսված է 470,000.0 հազար դրամ, որից սույն որոշման նախագծով նվազեցվում է 320,000.0 հազար դրամ, ինչը պայմանավորված է նախագծային նոր լուծումներով, ինչ արդյունքում մինչև տարվա վերջ հնարավոր է իրականացնել ընդամենը աշխատանքների որոշ մասը,
- Բյուջեի «Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում» ծրագրով «Հայաստան» հուշահամալիրից մինչև Բաբայան փողոց («Հյուսիսային ճառագայթ» թաղամաս) հետիոտն և տրանսպորտային ճանապարհների շինարարության

համար նախատեսված 300,000.0 հազար դրամից նախատեսվում է նվազեցնել 80,000.0 հազար դրամ, աշխատանքների իրականացումը նախատեսելով ամբողջությամբ իրականացնել հաջորդ տարիների ընթացքում,

- Որոշման նախագծով «Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում» ծրագրից նախագծային նոր առաջարկներով պայմանավորված նվազեցվում է 323,760.0 հազար դրամ, ինչը նախատեսված էր Աջափնյակ վարչական շրջանում և «Շողակաթ» հեռուստաընկերության հարակից տարածքում (Շենգավիթ վարչական շրջանում) հանգստի գոտիների ստեղծման համար։

Վերոգրյալ եկամուտների ավելացման և նշված ծախսային ուղղությունների վերաբաշխման միջոցով նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

- Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի հաշվառման համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել «Երևան համայնքի սեփականությունը համարվող գույքի հաշվառման» ծրագրային փաթեթ, ինչի նպատակով սույն որոշման նախագծով նախատեսվում է հատկացնել 780,0 հազար դրամ,
- Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեով կենտրոնական փողոցների բազմաբնակարան շենքերի ֆասադների նորոգման աշխատանքների համար նախատեսվել էր 300,000.0 հազար դրամ։ Նշված ծրագիրը լայնամասշտաբ և շարունակական դարձնելու, ինչպես նաև մյուս վարչական շրջանների փողոցներում և պողոտաներում նմանատիպ աշխատանքներ իրականացնելու նպատակով նախատեսվում է որոշման նախագծով 1,000,000.0 հազար դրամ ավելացնել բյուջեի «Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ» ծրագրին՝ թվով 200 շենքերի ֆասադների նորոգման համար,
- Սույն որոշման նախագծով նախատեսվում է 700,000.0 հազար դրամ հատկացնել Հրազդանի կիրճում բարեկարգման աշխատանքներ իրականացնելու նպատակով, ինչը ավելի գրավիչ կդարձնի կիրճը որպես հանգստի գոտի օգտագործելու համար,
- Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի N 235-Ա որոշման համաձայն Երևան համայնքը անդամակցել է «Եվրոսիթիս» քաղաքների ասոցիացիային։ Նշված որոշման 2-րդ կետի պահանջներն ապահովելու համար սույն որոշման նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում նախատեսել 1,128.9 հազար դրամ (2130 եվրո) 2011 թվականի 2-րդ կիսամյակի անդամակցության վճարը հատկացնելու համար,

- Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համար նոր ծառայողական ավտոմեքենաների գնման հետ կապված անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել նշված ավտոմեքենաների սպասարկման ծառայությունները, ինչն էլ հաշվի առնելով առաջարկվում է նախագծով 12,800.0 հազար դրամ (թվով 8 ավտոմեքենաների սպասարկում) նախատեսել մինչև տարվա վերջ նշված ավտոմեքենաների սպասարկման ծառայությունների գնման համար (8 x 400,0 հազար դրամ x 4 ամիս),
- Օգոստոսի 13-ից 21-ը 5-րդ համահայկական խաղերին Երևան քաղաքի հավաքական թիմերի նախապատրաստման և մասնակցության համար անհրաժեշտ ծախսերն իրականացնելու համար անհրաժեշտություն է առաջացել 11,500.0 հազար դրամ լրացուցիչ ծախսեր նախատեսել, ինչի կապակցությամբ առաջարկվում է սույն որոշման նախագծով նշված գումարը որպես դրամաշնորհ հատկացնել «Երևան» հիմնադրամին։
- Երևան քաղաքում կազմակերպվող ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներին առավել գրավիչ տեսքով քաղաքը զբոսաշրջիկներին և միջոցառումների հյուրերին ներկայացնելու համար նախատեսվում է իրականացնել փողոցների բարեկարգման և ցանկապատերի ներկման աշխատանքներ, որի համար սույն որոշման նախագծով նախատեսվում է հատկացնել 50,000.0 հազար դրամ,
- Երևանի քաղաքապետի 2010 թվականի հուլիսի 16-ի N 3207-Ա որոշմամբ հաստատված «Երևան քաղաքի հեղեղատար կոյուղու վերակառուցման և բարեփոխման աշխատանքների իրականացման ծրագրով» նախատեսված որոշ առաջնահերթ աշխատանքներ, մասնավորապես Թևոսյան, Սևանի, Ծխախոտագործների, Ռուբինյանց և Լենինգրադյան փողոցներում անձրևատարի և անձրևընդունիչների վերակառուցման աշխատանքներն իրականացնելու համար սույն որոշման նախագծով նախատեսվում է հատկացնել 269,022.1 հազար դրամ,
- Երևան քաղաքի Կոմիտասի անվան այգու՝ պանթեոնի տարածքի բարեկարգման, հուշարձանների և տապանաքարերի վերանորոգման համար առաջարկվում է նախատեսել 70,000.0 հազար դրամ,
- Միջազգային տուրիզմում ընդունված միջոցներից մեկը՝ տուրիստական ավտոբուսների միջոցով քաղաքի տեսարժան վայրերում բազմալեզու շրջայցեր կազմակերպելը, Երևան քաղաքում իրականացնելու նպատակով, ինչը նաև

լրացուցիչ եկամուտներ կապահովի քաղաքի համար, նախատեսվում է ձեռքբերել թվով 2 երկհարկանի տրանսպորտային միջոցներ։ Ավտոբուսների ձեռքբերման արժեքի մի մասը՝ 100,000.0 հազար դրամը, նախատեսվում է բյուջեի պահուստային ֆոնդից տրամադրել «Երևան» հիմնադրամին,

- 2011 թվականի փետրվարի 18-ին Ասիական զարգացման բանկի հետ քառակողմ ստորագրված «Փոխըմբռնման Հուշագիր»՝ քաղաքային ենթակառուցվածքների և կայուն քաղաքային զարգացման ծրագրի 13-րդ կետի համաձայն ծրագրի շրջանակներում գերակա հանրային շահ ճանաչված հողերի օտարման ծախսերը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Երևանի քաղաքապետարանի կողմից, ուստի նշված գործընթացները կազմակերպելու համար նախատեսվում է պահուստային ֆոնդից հատկացնել 600,000.0 հազար դրամ,
- Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեով «Հեծանվահրապարակի կառուցում» ծրագրով որպես կապիտալ բնույթի աշխատանքներ նախատեսվել էր 20,547.7 հազար դրամ Ծովակալ Իսակովի 27/8 հասցեում կառուցվող հեծանվահրապարակի մալուխագծի անցկացման աշխատանքների ձեռքբերման համար. Սակայն նշված աշխատանքները բնույթով կապիտալ չեն, ուստի առաջարկվում է նույն ծրագրով կատարել հոդվածային վերաբաշխում՝ նախատեսելով աշխատանքների իրականացումը ընթացիկ ծախսային հոդվածով։

Ելնելով վերոգրյալից առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություններ, ինչպես նաև Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացնել ընդհանուր թվով 339,022.1 հազար դրամ, իսկ վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 700,000.0 հազար դրամ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի եկամուտներն ու ծախսերը ավելանում են համապատասխանաբար 1,734,600.0 հազար դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ---------- ---ի
N ----- -Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		1 734 600,0	1 734 600,0	1 295 494,4
	այդ թվում՝				
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7300	1 734 600,0	1 734 600,0	-
	այդ թվում՝				
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7331	1 734 600,0	1 734 600,0	-
	որից՝				
1254	բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ		1 734 600,0	1 734 600,0	-
	այդ թվում՝				
1256	բբ) այլ դոտացիաներ		1 734 600,0	1 734 600,0	
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7400	-	-	1 295 494,4
	այդ թվում՝				
1390	3.9 Այլ եկամուտներ	7451	-	-	1 295 494,4
	այդ թվում՝				
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		-	-	1 295 494,4

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ---------- ---ի
N ----- -Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**1 734 600,0**	**1 734 600,0**	**1 295 494,4**
2100	**01**	**0**	**0**	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**13 580,0**	**12 800,0**	**780,0**
				այդ թվում՝			
2110	**01**	**1**	**0**	***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ***	**13 580,0**	**12 800,0**	**780,0**
				որից՝			
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	13 580,0	12 800,0	780,0
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**350 000,0**	**50 000,0**	**300 000,0**
				այդ թվում՝			
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***	**350 000,0**	**50 000,0**	**300 000,0**
				որից՝			
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	350 000,0	50 000,0	300 000,0
2600	**06**	**0**	**0**	**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**	**1 000 000,0**	**-**	**1 000 000,0**
				այդ թվում՝			
2660	**06**	**6**	**0**	***Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)***	**1 000 000,0**	**-**	**1 000 000,0**
				որից՝			
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1 000 000,0	-	1 000 000,0
2800	**08**	**0**	**0**	**ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ**	**(311 131,1)**	**33 176,6**	**(344 307,7)**
				այդ թվում՝			
2810	**08**	**1**	**0**	***Հանգստի և սպորտի ծառայություններ***	**(312 260,0)**	**32 047,7**	**(344 307,7)**
				որից՝			
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ	(312 260,0)	32 047,7	(344 307,7)
2840	**08**	**4**	**0**	***Կրոնական և հասարակական այլ ծառայություններ***	**1 128,9**	**1 128,9**	**-**
				որից՝			
2843	08	4	3	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	1 128,9	1 128,9	-
3100	**11**	**0**	**0**	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**	**682 151,1**	**1 638 623,4**	**339 022,1**
				այդ թվում՝			
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***	**682 151,1**	**1 638 623,4**	**339 022,1**
				որից՝			
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	682 151,1	1 638 623,4	339 022,1

Հավելված N 3
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ---------- ---ի
N ----- -Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
4000	**ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ**		**1 734 600,0**	**1 734 600,0**	**1 295 494,4**
	այդ թվում՝				
4050	**Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝**	x	**439 105,6**	**1 734 600,0**	**339 022,1**
	այդ թվում՝				
4200	**1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ**	x	**83 347,7**	**83 347,7**	**-**
	այդ թվում՝				
4230	***ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ***	x	20 547,7	20 547,7	-
	որից՝				
4238	-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	20 547,7	20 547,7	-
4250	***ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)***	x	62 800,0	62 800,0	-
	որից՝				
4251	-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	50 000,0	50 000,0	-
4252	-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	12 800,0	12 800,0	-
4500	**1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ**	x	**11 500,0**	**11 500,0**	**-**
	այդ թվում՝				
4530	***ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ***	x	11 500,0	11 500,0	-
	որից՝				
4533	- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	11 500,0	11 500,0	-
4700	***1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ***	x	**683 280,0**	**1 639 752,3**	**339 022,1**
	այդ թվում՝				
4710	***ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ***	x	1 128,9	1 128,9	-
	որից՝				
4712	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	1 128,9	1 128,9	-
4770	***ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ***	x	**682 151,1**	**1 638 623,4**	**339 022,1**
	որից՝				
4771	**-Պահուստային միջոցներ**	4891	682 151,1	343 129,0	339 022,1
4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	-	1 295 494,4	-
5000	**Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ**	x	**956 472,3**	**-**	**956 472,3**
	այդ թվում՝				
5100	**1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ**	x	**956 472,3**	**-**	**956 472,3**
	այդ թվում՝				
5110	***ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ***	x	955 692,3	-	955 692,3
	որից՝				
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(220 547,7)	-	(220 547,7)
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	1 176 240,0	-	1 176 240,0
5130	***ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ***	x	780,0	-	780,0
	որից՝				

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6
5132	- Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	780,0	-	780,0

Հավելված N 4
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ---------- ---ի
N ----- -Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**1 734 600,0**	**1 734 600,0**	**1 295 494,4**
2100	**01**	**0**	**0**	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**13 580,0**	**12 800,0**	**780,0**
				այդ թվում՝				
2110	**01**	**1**	**0**	***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ***		**13 580,0**	**12 800,0**	**780,0**
				որից՝				
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում		13 580,0	12 800,0	780,0
				այդ թվում՝				
				1. Կառավարման մարմնի պահպանում		***13 580,0***	***12 800,0***	***780,0***
				-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	12 800,0	12 800,0	-
				-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	780,0	-	780,0
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**350 000,0**	**50 000,0**	**300 000,0**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**350 000,0**	**50 000,0**	**300 000,0**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		350 000,0	50 000,0	300 000,0
				այդ թվում՝				
				7. Հրազդանի կիրճի բարեկարգում		***700 000,0***	***-***	***700 000,0***
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	-	-	-
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	700 000,0	-	700 000,0
				8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում		***(400 000,0)***	***-***	***(400 000,0)***
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(400 000,0)	-	(400 000,0)
				9. Փողոցների պահպանում և շահագործում		***50 000,0***	***50 000,0***	***-***

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	50 000,0	50 000,0	-
2600	06	0	0	**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**		**1 000 000,0**	**-**	**1 000 000,0**
				այդ թվում՝				
2660	06	6	0	***Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)***		**1 000 000,0**	**-**	**1 000 000,0**
				որից՝				
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		1 000 000,0	-	1 000 000,0
				այդ թվում՝				
				5. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ		***1 000 000,0***	***-***	***1 000 000,0***
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	1 000 000,0	-	1 000 000,0
2800	08	0	0	**ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ**		**(311 131,1)**	**33 176,6**	**(344 307,7)**
				այդ թվում՝				
2810	08	1	0	***Հանգստի և սպորտի ծառայություններ***		**(312 260,0)**	**32 047,7**	**(344 307,7)**
				որից՝				
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ		(312 260,0)	32 047,7	(344 307,7)
				այդ թվում՝				
				1. Սպորտային միջոցառումների կազմակերպում		***11 500,0***	***11 500,0***	***-***
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	11 500,0	11 500,0	-
				2. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում		***(323 760,0)***	***-***	***(323 760,0)***
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(200 000,0)	-	(200 000,0)
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(123 760,0)	-	(123 760,0)
				3. Հեծանվահրապարակի կառուցում		***-***	***20 547,7***	***(20 547,7)***
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	20 547,7	20 547,7	-
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(20 547,7)	-	(20 547,7)
2840	08	4	0	***Կրոնական և հասարակական այլ ծառայություններ***		**1 128,9**	**1 128,9**	**-**
				որից՝				
2843	08	4	3	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ		1 128,9	1 128,9	-
				այդ թվում՝				
				1. Անդամակցության վճարներ		***1 128,9***	***1 128,9***	***-***
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	1 128,9	1 128,9	-
3100	11	0	0	**ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ**		**682 151,1**	**1 638 623,4**	**339 022,1**

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հղված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				այդ թվում՝				
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**682 151,1**	**1 638 623,4**	**339 022,1**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		682 151,1	1 638 623,4	339 022,1
				այդ թվում՝				
				-Պահուստային միջոցներ	4891	682 151,1	343 129,0	339 022,1
				-Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե	x	-	1 295 494,4	-

Հավելված N 5
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի ---------- ---ի
N ----- -Ն որոշման

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 169-Ն ՈՐՈՇՄԱՆ N 7 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1
ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		**1 734 600,0**	**1 734 600,0**	**1 295 494,4**
2100	**01**	**0**	**0**	**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**13 580,0**	**12 800,0**	**780,0**
				այդ թվում՝				
2110	**01**	**1**	**0**	***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ***		**13 580,0**	**12 800,0**	**780,0**
				որից՝				
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում		13 580,0	12 800,0	780,0
				այդ թվում՝				
				1. Կառավարման մարմնի պահպանում		***13 580,0***	***12 800,0***	***780,0***
				-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252	12 800,0	12 800,0	-
				-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132	780,0	-	780,0
2400	**04**	**0**	**0**	**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**		**350 000,0**	**50 000,0**	**300 000,0**
				այդ թվում՝				
2450	**04**	**5**	**0**	***Տրանսպորտ***		**350 000,0**	**50 000,0**	**300 000,0**
				որից՝				
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ		350 000,0	50 000,0	300 000,0
				այդ թվում՝				
				7. Հրազդանի կիրճի բարեկարգում		***700 000,0***	***-***	***700 000,0***
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	700 000,0	-	700 000,0
				8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում		***(400 000,0)***	***-***	***(400 000,0)***
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(400 000,0)	-	(400 000,0)
				9. Փողոցների պահպանում և շահագործում		***50 000,0***	***50 000,0***	***-***

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
				-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251	50 000,0	50 000,0	-
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ		1 000 000,0	-	1 000 000,0
				այդ թվում՝				
2660	06	6	0	*Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)*		1 000 000,0	-	1 000 000,0
				որից՝				
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)		1 000 000,0	-	1 000 000,0
				այդ թվում՝				
				5. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ		*1 000 000,0*	-	*1 000 000,0*
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	1 000 000,0	-	1 000 000,0
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ		(311 131,1)	33 176,6	(344 307,7)
				այդ թվում՝				
2810	08	1	0	*Հանգստի և սպորտի ծառայություններ*		(312 260,0)	32 047,7	(344 307,7)
				որից՝				
2811	08	1	1	Հանգստի և սպորտի ծառայություններ		(312 260,0)	32 047,7	(344 307,7)
				այդ թվում՝				
				1. Սպորտային միջոցառումների կազմակերպում		*11 500,0*	*11 500,0*	-
				- Այլ ընթացիկ դրամաշնորհներ	4639	11 500,0	11 500,0	-
				2. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում		*(323 760,0)*	-	*(323 760,0)*
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(200 000,0)	-	(200 000,0)
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	(123 760,0)	-	(123 760,0)
				3. Հեծանվահրապարակի կառուցում		-	*20 547,7*	*(20 547,7)*
				-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	20 547,7	20 547,7	-
				- Շենքերի և շինությունների կառուցում	5112	(20 547,7)	-	(20 547,7)
2840	08	4	0	*Կրոնական և հասարակական այլ ծառայություններ*		1 128,9	1 128,9	-
				որից՝				
2843	08	4	3	Կրոնական և հասարակական այլ ծառայություններ		1 128,9	1 128,9	-
				այդ թվում՝				
				1. Անդամակցության վճարներ		*1 128,9*	*1 128,9*	-
				-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	1 128,9	1 128,9	-
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ		682 151,1	1 638 623,4	339 022,1
				այդ թվում՝				

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Հոդված NN	Ընդամենը	այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում)	
							վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9
3110	11	1	0	***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ***		**682 151,1**	**1 638 623,4**	**339 022,1**
				որից՝				
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ		682 151,1	1 638 623,4	339 022,1
				այդ թվում՝				
				-Պահուստային միջոցներ	4891	682 151,1	343 129,0	339 022,1
				-Հատկացում պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե	x	-	1 295 494,4	-